

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական միջնորդությունը այժմ շատ աւելի պարզւել է, քան այդ կարելի էր ասել մի քանի ամիս առաջ: Ռուսաց Թագաւոր Վայսեր այցելութիւնը գերմանական Վայսար Վիլհելմ II-ին Բերլինում սպասածից աւելի նպաստեց խաղաղութեան յոյսերին: Միւս կողմից Ֆրանսիական ընտրութիւնները Պառագամաւորների ժողովի համար նմանապէս սպասածից աւելի բարեկաշու էլք ունեցան և, արդէն փակւած՝ բայց վերին աստիճանի յաջողած աշխարհահանդիսի տպաւորութեան ներքոյ, Ֆրանսիան, դադրած կուսակցական կռիւներից, մի առանձին սիրով ընդգրկում է կառավարութիւնից առաջարկած պարլամենտական աշխատանքի ծրագիրը՝ բոլոր ոյժերը նւիրել տնտեսական և սօցիալական խնդիրների լուծման: Լօրդ Սալիսբերի նորերումն արտասանած մի ճառում դրականապէս յայտնում է, որ խաղաղութեան խանգարման ոչինչ առիթներ չը կան:

Բայց այն բոլորը, ինչ մենք այս ամբողջ տարին ասել ենք եւրոպական քաղաքականութեան ֆակտորների մասին, պահպանում են իրանց ոյժը նաև այսօր. միջին-եւրոպական եռապետական դաշնակցութիւնը մնում է նոյն ոյժի մէջ: Այն ջանքը, որ գործ է ածում Գերմանիան այդ միութեան հետ միւս տէրութիւններին հաշտեցնելու կամ բարեկամացնելու համար, շարունակեց նաև անցեալ ամիսները. Գերմանական-Աւստրո-Ունգարական-Իտալական դաշնակցութեան դիմաց բարեկամական դիրք են բռնած մէկ կողմից Անգլիան, միւս կողմից՝ Թիւրքիան, որոնց երկուսին էլ այցելեց երիտասարդ Վիլհելմ Վայսարը:

Ոյժերի գրաւած տեղերը չը կրեցին փոփոխութիւններ. գերիշխողը կրկին մնում է եռապետական դաշնակցութիւնը. միայն թէ

այժմեան և քանի ամիս առաջ եղած դրութեան մէջ կայ այս զանազանութիւնը, որ տէրութիւնների մէջ եղած յարաբերութիւնները այն աստիճանի սպառնալի չեն:

Իայց ահա ընդհանուր քաղաքական հանգամանքների մէջ այժմ ուղում է աւելանալ մի նոր ֆակտոր: Եւ այդ ֆակտորը աւելանում է արդէն դրսից: Դա՝ ընդհանուր ամերիկական մաքսային միութեան խնդիրն է, որի նշանակութիւնը կարող ենք անուանել տիեզերական, եթէ նա միայն իրագործւի:

Հիւսիսային Միացեալ Նահանգները առաջարկում են բոլոր ամերիկական տէրութիւններին միանալ ոչ քաղաքականապէս, այլ տնտեսապէս, որպէս զի իրանց առուտուրը իրար հետ լինի միայն՝ փակելով Ամերիկայի դռները եւրոպական առուտուրի համար:

Իայց որովհետեւ բոլոր եւրոպական տէրութիւնների համար դա գրեթէ հաւասարապէս զարհուրելի է, քանի որ նրանք ամենքը Ամերիկայի հետ տնտեսական կապեր ունին, այդ պատճառով այդ կարելիութեան առջև եւրոպական տէրութիւնների քաղաքական և տնտեսական թշնամական յարաբերութիւնները շատ թէ քիչ պէտք է կակղեն, որ կարողանան ընդհանուր ոյժերով մի այդպիսի հսկայական նախագծի իրագործման դէմն առնել:

Ահա՛ ինչու ամերիկական մաքսային միութեան խնդիրը վերին աստիճանի քաղաքական խնդիր ենք համարում և հռչակում իբր մի նոր ֆակտոր եւրոպական քաղաքականութեան:

Այժմ դառնանք այս վերջին ժամանակներում յարուցած ամենակարեւոր խնդրին, որի մասին, փակագծում ասենք, մեր լրագրութեան մէջ յիշատակութիւն անգամ չը կայ: Սակայն այստեղ յառաջաբան է հարկաւոր: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնք մի անկախ հանրապետական տէրութիւն են կազմում սկսած 1774 թւականից և որոնց առաջին նախագահը ամենքին յայտնի Վաշինգտոնն էր, ի սկզբանէ պրինցիպ են ունեցել՝ չը թոյլ տալ, որ եւրոպայի տէրութիւնները միջամտեն, խառնեն Ամերիկայի տէրութիւնների քաղաքական գործերի մէջ: Թող ամերիկացիք իրանք տնօրինեն իրանց գործերը այնպէս, ինչպէս իրանք ուզում են—ահա՛ այդ պրինցիպի իմաստը: Այդ սկզբունքը զանազան դէպքերում յայտնել են Գէորգ Վաշինգտոն և Թոմաս ժեֆֆերսոն: Այդ սկզբունքը

Միացեալ Նահանգներին քաղաքականութեան հիմք էր ծառայում մինչև որ 1823 թւականին, դեկտեմբերի 2-ին, նախագահ Մոնրոէ նոյն այդ սկզբունքը կրկնեց իւր նախագահական պատգամաւորութեան մէջ՝ կարդացած Վաշինգտօնի կօնգրեսում (Նահանգների ներկայացուցիչների ժողով)։

Որպէս տեսնում է ընթերցողը, այդ սկզբունքը առաջ էլ կար բաց նա երբէք չէր յայտնւած այն վճռական խօսքերով, ինչպէս Մոնրոէ'ի բերանից։

Ահա այդ սկզբունքն է, որը յայտնի է անունովս՝ Մոնրոէ'ի սկզբունք, Մոնրոէ'ի դօքտրին, և որի մասին այնքան ու այնքան խօսացել է և վիճել թէ Ամերիկայում և թէ Ներուպայում։

Դա մի օրէնք չէ, այլ միայն մի հայեացք է, բայց մի հայեացք, որը օրէնքի չափ զօրութիւն է ունեցել Միացեալ Նահանգների քաղաքականութեան համար։

Այժմեան քաղաքական ուղղութիւնների մէջ մենք գտնում ենք մի որոշ չափով նմանութիւն Մոնրոէ'ի դօքտրինի հետ—Ռուսիայում քարոզած և ոյժ ունեցող այն շփուլի մէջ, որի հեղինակաւոր հիմնադիրներինցն էր հանգուցեալ Ակսակովը։ Մենք ուզում ենք ասել դորանով միայն այն, որ Մոնրոէ'ի դօքտրինի հիմքը նոյն պահանջն է Ամերիկայի համար, ինչ որ է և Ակսակովինը Ռուսիայի համար, այն է, որ Ամերիկայի քաղաքական և կուլտուրական զարգացումը կատարւի եւրոպական տէրութիւնների միջամտութիւնից անկախ կերպով, որ Ամերիկայի տէրութիւնները թէ առւտրական և թէ քաղաքական դաշինքներով այնպէս չը կապեն Ներուպայի տէրութիւնների հետ, որ Ամերիկան որ և իցէ կերպով ազդւի Ներուպայի շահերից, որ Ներուպան մի տեսակ զօրով մոցնէ Ամերիկայի մէջ իւր տեսակէտները և այլն։ Մոնրոէ'ի դօքտրինի հիմքը առհասարակ ամեն տեսակ սամօբըրիտնիկ-ների վարդապետութեան հիմքն է։

Այն հռչակը, որը ստացել է Մոնրոէ'ի դօքտրինը, հարկ է դնում մեզ վերայ ծանօթացնել բնագրի իսկական խօսքերի հետ, թէպէտ և Մոնրոէ'ի դօքտրինի այժմեան հետևողները իրանց կապած չեն զգում այդ խօսքերի հետ։ Մոնրոէ'ի այդ խօսքերը ընդհանրապէս յայտնի չեն ոչ միայն մեզանում և Ներուպայում, այլ

նոյն իսկ Ամերիկայում. որովհետեւ, որպէս արդէն ասացինք, Մօնրօէի անունով յայտնի սկզբունքը նրան սեպհական չէ, այլ ի բնէ ամերիկական է այն օրից, երբ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները անկախութիւն ձեռք բերին:

Մօնրօէ նախագահի պատգամաւորութիւնը, որ կարգացւեց 1823 թ. դեկտեմբերի 2-ին, Վաշինգտոնի պետական ժողովում, բաժանւում է երկու մասի, որոնցից առաջինի մէջ յայտնւում է թէ՛ «Ամերիկական կոնտինենտները իրանց անկախ դրութեան պատճառով, որ նրանք ձեռք են բերել և պահպանում են, այժմեանից այլ ևս չը պիտի նկատւեն որպէս բաց դադրականութեան համար՝ Եւրոպայի որ և է պետութեան կողմից»: Երկրորդ մասում Մօնրօէ շարունակում է այսպէս. «Այն պարզութիւնը և բարեկամական յարաբերութիւնները, որ զոյութիւն ունին Միացեալ Նահանգների և Եւրոպական պետութիւնների մէջ, պարտք են դնում մեզ վերայ յայտնելու, որ ամեն մի փորձ, որ նրանք կ'անեն իրանց սիստեմը մեր կոնտինենտի մի որ և իցէ մասում տարածելու համար, մեզնից կը նկատուի իբր մեր խաղաղութիւնը և ապահովութիւնը խանգարող: Գոյութիւն ունեցող դադրականութիւնների կամ Եւրոպական պետութիւններից կախումն ունեցող տէրութիւնների գործերի մէջ մենք չենք խառնւել և այդ չենք անելու: Բայց երբ մի Եւրոպական պետութիւն փորձ փորձի խեղդել և կամ որ և իցէ կերպով ճակատագիրը որոշել այն տէրութիւնների, որոնք իրանց անկախութիւնը յայտնել են և որոնց անկախութիւնը մենք, լուրջ խորհելուց յետոյ, արդար սկզբունքների հիման վերայ ընդունել ենք, — մենք այդ փորձի մէջ կը նկատենք միայն Միացեալ Նահանգների դէմ ունեցած անբարեկամական դիտաւորութիւնների ապացոյց»:

Մօնրօէն այդ խօսքերը արտասանում էր կրիտիքական բոպէին: Դա այն ժամանակն էր, երբ Նապօլէօն I-ին վայր գցելուց յետոյ կազմած «Սրբազան-Միութեան» անդամները (Անգլիան, Ռուսիան, Աստորիան և Պրուսիան) ձև էին ցոյց տալիս, իբր ուզում են խառնուել հարաւային Ամերիկայի նորակազմ պետութիւնների գործերի մէջ: Դեռ ևս դորանից առաջ, 1820 թւականին, Ռուսիան առաջարկեց Միացեալ Նահանգներին միանալ «Սրբազան-Միութեան» հետ. բայց առաջարկութիւնը մերժւեց այս խօսքերով, թէ Միացեալ Նա-

հանգնելի քաղաքական սխտեմը եւրոպական շահերից դուրս է և որ իրանք ամեն կերպ աշխատում են եւրոպական պետութիւնների հետ խառնելուց իրանց հեռու պահել:

Երեք տարի դորանից յետոյ Անգլիան առաջարկեց Միացեալ Նահանգներին իրան դաշնակիցը լինել, բայց մերժեց այն պատճառով, որ Անգլիան չէր ընդունում իսպանական—ամերիկական հանրապետութիւնների անկախութիւնը: Ուրեմն Անգլիան ուզում էր թոյլ տալ իրան խառնել ամերիկական գործերի մէջ և Հիւսիսային Ամերիկային խառնել եւրոպական գործերի մէջ. քանի որ առաջարկած դաշնագրութիւնով Անգլիան ուզում էր աւելի ևս դժարացնել Իսպանիայի գործը՝ ապստամբւած ամերիկական զաղթականութիւններին ճնշելու նկատմամբ:

Մօնրօէ'ի դօքտրինը երբէք պետական օրէնք չի եղած և այն փորձերը, որ արել են պարլամենտից ընդունել տալու իբր օրէնք՝ չեն յաջողւած: Նա մնացել է միայն իբր պրինցիպ, որը լռելեայն պահպանւած է, բայց որը, նայած հանգամանքներին, կարող էր փոխել: Օրինակի համար, հէնց 1826 թւականին Պանամայում առաջին անգամ կայացած համաամերիկական կոնգրեսին Միացեալ Նահանգները չը մասնակցեցին, ասելով թէ՝ հարաւային-ամերիկացիների հետ ձեռք ձեռքի տւած գնալու հետեւանքը կարող է լինել՝ եւրոպական գործերի մէջ խառնելը, քանի որ այն կոնգրեսը ուղղած էր եւրոպական տէրութիւնների դէմ:

Բայց մի միակ անգամ է պատահել, որ Միացեալ Նահանգները մի եւրոպական պետութեան հետ միացած լինին ամերիկական ցամաքի քաղաքական հանգամանքները որոշելու համար: Այդ է՝ 1850 թւականի Կլայտօն-Բուլերեան դաշինքը, որը վերաբերում է կենդրոնական Ամերիկայի կտրելուն նաւազնաց ջրանցքով, որպէս նաև նորա ափերին բերդեր շինելուն:

Մօնրօէ-դօքտրինի համաամերիկական գաղափարին փոքր ինչ հակառակ էր նաև այն, որ Միացեալ Նահանգները մի քանի տարի առաջ մասնակցեցին Բերլինի կոնֆերենցին Կոնգօ'ի վերաբերեալ (Աֆրիկայում):

Ահա՛ Մօնրօէ-դօքտրինը իւր պատմական զանազան շրջաններում: Բայց դեռ ևս երբէք այդ գաղափարը չէր հասել մինչ այն հասու-

նութեանը, որ ուզում է տալ նորան Բլէյնը, այդ ամերիկական քաղաքական գործիչը, որի եռանդը անսպառ կերպով գործում է տարիներից ի վեր:

Այդ 1881 թւականին էր, հանգուցեալ պատւական Գարֆիլդի նախագահութեան ժամանակ, որ այն ժամանակեայ պետական քարտուղար Բլէյնի մէջ (Blaine) միտք յղացաւ՝ Ամերիկայի բոլոր պետութիւններին առևտրական և մաքսային դաշնակցութիւնը գլուխ բերել: Գարֆիլդի մահը ու դորա հետեանք՝ Բլէյնի հրաժարականը իւր պաշտօնից, խանգարեցին նախագծի իրագործումը: Գարֆիլդի յաջորդ Արչերի (Arthur) նախագահութեան ներքոյ միմիայն մի յանձնաժողով ուղարկեց Մեքսիկո և կենդրոնական ու հարաւային Ամերիկայի երկիրները, իմանալու համար թէ ո՛րքան նրանք տրամադիր են Միացեալ Նահանգների հետ առևտրականապէս և մաքսային կողմից կապել: Նախընթաց փոքրային կօնգրեսը (Պատգամաւորների ժողովը), սակայն, այժմեան նախագահ Հերիսօնին (Harrison) լիազօրութիւն տւեց, հրաւեր ուղարկել ամերիկական տէրութիւններին մի միջազգային կօնգրեսի համար, որի խորհրդակցութեան առարկաները որոշած էին այսպէս. —

Ապահով միջոցներ որոշել Ամերիկայի բոլոր պետութիւնների մէջ խաղաղութիւն և փոխադարձ բարգաւաճում պահպանելու համար: Բացի դորանից, մի ամերիկական մաքսային միութիւն հաստատել՝ ամերիկական ազգերի փոխադարձ առևտրին նպաստելու համար յօգուտ ամենքի:

Կանոնաւոր և յաճախ հաղորդակցութիւնների համար ամերիկական երկիրների նաւահանգիստների մէջ զօժեր ստեղծել:

Ստեղծել միմիակ սիստեմ մաքսային կանոնների ներմուծման և արտահանման համար և մաքսերի կլասիֆիկացիան որոշել:

Որոշել առողջական կանոններ նաւերի և քարանտինների համար:

Ընդունել միմիակ սիստեմ չափերի և կշիռների համար:

Պաշտպանութիւն պատենտային իրաւունքների:

Ցանցաւորներին յետ տալու կանոնները որոշել:

Ընդունել մի հաւասար արժէքի արծաթի դրամ, իբր ընդունելի վճարման միջոց ամերիկական տէրութիւնների միջազգային առևտուրի մէջ:

Հաստատել մի միջազգային դատարան ամերիկական տէրութիւնների մէջ ծագած կռիւների և տարաձայնութիւնների համար:

Խորհրդակցել, վերջապէս, այլ միջոցների մասին, որոնք կարող են ծառայել նոյն երկիրների բարօրութեան:

Կօնգրես գումարելը յաջողւեց: Նոր տոմարով հոկտեմբերի 2-ին 17 ամերիկական պետութիւնների ներկայացուցիչները, թւով 50-60 հոգի, գումարւեցին Կօնգրեսի Վաշինգտօն քաղաքում. նիստը բացեց պետական քարտուղար Բլէն վարպետ մի ճառով, որի գլխաւոր կէտերը ընթերցողը կը կարդայ «Մուրճ»-ի դալ № 12-երորդի մէջ, Արտասահմանեան Թղթակցութիւնների բաժնում:

Բոլոր պատգամաւորներին հանրապետութեան նախագահը և Բլէնը պատեցին խնձոյքներով: Իրանց առաջին նիստում նրանք ընտրեցին Կօնգրեսի նախագահ Բլէնին, և յետոյ 3-ին հոկտեմբերի, Միացեալ Նահանգների հաշուով, փառաւոր վագօններով սկսեցին այն ճանապարհորդութիւնը, որի ծրագրի մասին խօսում է «Մուրճ»-ի ներկայ համարում տպած Նիւ-Յօրկի մի Թղթակցութիւնը (տե՛ս Արտասահմանեան Թղթակցութիւն): Կօնգրեսի պարապմունքները կը սկսեն, երբ դելեգատները վերադարձած կը լինին այդ ճանապարհորդութիւնից, որը ամիս ու կէս պիտի տևէ: Այդ ճանապարհորդութեան ծածուկ նպատակն է՝ ապացուցել ֆնացեալ Ամերիկային, որ Միացեալ Նահանգները ամեն բան ունին, ինչ միւս ամերիկացիներին պակաս է և որ, փոխանակ Եւրոպային դիմելու, նրանք կարող են դործարանական ապրանքների համար դիմել Միացեալ Նահանգներին: Ուզում են ապացուցել, որ Ամերիկան ինքը իւր մէջ ունի ամեն բան, ինչ հարկաւոր է և որ տնտեսապէս իրանք կարող են աշխատել, ապրել և բարգաւաճել՝ առանց Եւրոպայի կաթոտութիւնը քաշելու:

Բլէնի ծրագիրը մի կատարեալ սպառնալիք է Եւրոպային. դա՛ տնտեսական պատերազմ է, եթէ ծրագիրը իրագործւի: Որ Եւրոպան չի կարող հանգիստ աչքով նայել արդէն գումարւած Կօնգրեսի վերայ, — այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է: Առ այժմ միակ հանգամանքը այն է, որ Կօնգրեսի դելեգատները լիազօրութիւններ չ'ունին դաշինքներ կապելու, այնպէս որ լինելու բանը չի ապագային է թողած: Աչքի առաջ կանգնած սպառնալիքը Եւրոպա-

յի համար այնքան մեծ է, որ անգլիական, ֆրանսիական, գերմանական և խոտալական թերթերը այդ խնդրի մասին այն ձևով են խօսում, որ կարծես սրանք ամենքը մի հայրենիքի բերանից խօսում լինէին։ Այն միտքը, թէ Եւրոպայի տէրութիւնները կարող են միասալ, առևտրական և մաքսային միութիւն կազմել՝ մինչև այժմ ծաղրալի միտք էր թւում, այն աստիճանի գրեթէ միշտ լարւած են եղել այդ տէրութիւնների քաղաքական և տնտեսական յարաբերութիւնները։ Բայց այժմ, երբ Ամերիկայում ձեռնարկում են ամբողջ Ամերիկան տնտեսապէս միացնելու վիթխարի միտքը իրագործելու, եւրոպական միութեան մասին այժմ սկսում են խօսել այնպէս, ինչպէս իրար հակառակ մարդիկ կը խօսեն մի ընդհանուր և չը սպասած թշնամու առաջ կանգնած ժամանակ։

Բլէն'ի ծրագիրը կարող է ժամանակով իրագործել, բայց որ հեշտ իրագործելու չէ, դորա մէջ մենք համոզւած ենք։ Ինչո՞ւ։—Որովհետև Ամերիկայի ազգերը ծագումով, ցեղով և լեզուով միապաղաղ ազգաբնակութիւն չեն կազմում։ Մինչև որ մի զօրեղ քաղաքական հիմք չը լինի, զանազան ազգեր իրար հետ թէկուզ միայն տնտեսապէս միանալու զօրեղ տրամադրութիւն չեն ունենալ, որովհետև անկասկած է, որ տնտեսական միութիւնը տանում է դէպի քաղաքական միութիւն։ Մինչև որ Գերմանիան, 1871 թւականին, մի միակ տէրութեան մէջ ձուլեց, քառասուն տարւայ չափ մաքսային միութեան մէջ ապրեց։

Բլէն'ի նախագծի իրագործումը—մենք խօսում ենք միայն առևտրական և մաքսային միութեան մասին—Միացեալ Նահանգների և ոչ թէ լոկ մի իդէալական գաղափարի յաղթութիւնը կը նշանակէ։ Բանը սրանումն է, որ Միացեալ Նահանգները ի սկզբանէ այնպիսի սոսկալի մաքսեր ունին ներմուծող ապրանքների համար, որ Եւրոպայից համեմատապէս շատ քիչ ապրանք է մտնում այդ պետութեան սահմանները։ Խրախուսւած և պաշտպանւած այդ բարձր մաքսերով, Միացեալ Նահանգներում սկսեցին գործարաններ հիմնել, որոնք ժամանակով այնքան շատացան, որ սկսեցին շատ աւելի արդիւնագործել, քան կարող էին նրանք վաճառել։ Եւ այժմ այդ պետութիւնը, որը տնտեսապէս իրան շրջապատել էր գրեթէ չինական պատերով, տեսնելով որ այլ ևս հնար չը կայ ինքն իրան ապրել,

որոնում է վաճառատեղիներ, ինչպէս այդ վաղուց անում են եւրոպական երկիրները: Եւ ահա նա նախագիծ է պատրաստում՝ խել եւրոպայի ձեռքից լայն վաճառատեղիները, որ եւրոպական ազգերը ստեղծել են Ամերիկայի երկիրներում: Միացեալ Նահանգները ասում են Մեքսիկային և ամբողջ Հարաւային Ամերիկային: «Այն կաշին, այն բուրդը, այն մորթիքը և այլ հում բերքերը, որ դուք մինչ այժմ եւրոպա էիք ուղարկում, այդ մեզ էլ հարկաւոր է և մենք ձեզնից կ'առնենք. դորա փոխարէն այն բոլորը, ինչ դուք առնում էիք եւրոպայից, մեզնից առէք: Ձեր նաւահանգիստները մինչ այժմ կապած էին եւրոպայի նաւահանգիստների, զլխաւորապէս Լիւերպուլի հետ, այսուհետեւ թո՛ղ նրանք կապած լինին մեր նաւահանգիստների հետ: Մի խօսքով՝ դուք մեզ պէտք էք: Եւրոպան էլ ասում է ձեզ, թէ նրան շատ պէտք էք, բայց զանազանութիւնը նրանումն է, որ նրանց հետ ձեր կապը բուն տնտեսական է, իսկ մեզ հետ կապելով, տնտեսականի վերայ կ'աւելանայ զաղափարականը, համաամերիկական զաղափարը, որ Մօնրօէ'ի սկզբունքի հիմքն է կազմում»:

Խնդիրը այսպէս է դրւած: Կը մնայ մեզ սպասել կօնգրեսի վախճանին և տեսնել թէ ինչ դիրք կը բռնեն եւրոպական տէրութիւնները դէպի նա:

Մեծամասնութեան համար բոլորովին անսպասելի կերպով հեռագիրը լուր բերեց, թէ Բրազիլիայի Բիօ-ժանէյրօ մայրաքաղաքում յեղափոխութիւն կատարւեց, որով այդ երկրում վերացւեց կայսերութիւնը և հրատարակեց հանրապետութիւն: Առ այժմ կազմւած է մի ժամանակաւոր կառավարութիւն մարշալ Մարտինսի զլխաւորութեամբ: Քաղաքական լրագրութեան լուրջ հետևողները, սակայն, շատ թէ քիչ հեռաւոր սպառաջի համար սպասում էին այժմ արդէն կատարւած եղելութիւնը: Մի տարի կայ, որ այդ տեսակ դէպքի համար գուշակութիւն էին անում լաւ տեղեկութիւն ունեցող լրագիրները:

Բրազիլիայում վաղուց կար մի հանրապետական կուսակցութիւն: Բայց այդ կուսակցութիւնը անզօր էր: Սրան ուժեղացնելու նպատեցին հանգամանքներ, որոնցից մի քանիսը արտաքին են, զլխա-

ւորները սակայն՝ ներքին են: Արտաքիններից կարելի է անուանել՝ մի կողմից համաամերիկական շարժումը, որին նւիրած է ներկայ տեսութեան առաջին մասը և երկրորդ՝ Ֆրանսիական համաշխարհային հանդէսը: Եթէ համաամերիկական զաղափարը իրագործւելու է, այն ժամանակ բոլոր ամերիկական տէրութիւնների մէջ, որոնք պէտք է միանան, Բրազիլիան կը կազմէր միակ բացառութիւնը իւր միապետական կառավարութիւնով:

Ինչ վերաբերում է Պարիզի համաշխարհային հանդիսի ազդեցութեանը, այդ այն բանին պէտք է վերագրել, որ բրազիլիացիք, թէև պօրտուգալական ծագումն ունին, բայց միանգամայն սնւած են Ֆրանսիական գրականութիւնով. այնպէս որ զարմանալու չէ, եթէ ներկայ տարւայ աշխարհահանդիսի փայլը ազդած լինի Բրազիլիայի վերայ յօգուտ հանրապետութեան:

Բայց իսկական պատճառները աւելի խորն են և ներքին, այլապէս բոլորովին անկարելի էր յեղափոխութիւնը այժմեան կայսր Դոմ Պեդրո՛ի ժամանակ, որի մեծ ժողովրդականութեան առջև խոնարհւում էին և՛ բարեկամները և՛ կայսերութեան թշնամիները:

Հանրապետականների զօրեղանալուն նպաստեցին հետևեալ հանգամանքները:—Վերջին ժամանակներում մոցրած ծայրայեղ կենդրոնականութիւնը, որը մեծամեծ դժգոհութիւններ յարուցեց և նահանգների մէջ արծարծեց բաժանւելու միտքը:

1886 թւականին կայսր Դոմ Պեդրո գնաց Եւրոպա իւր քայքայւած առողջութիւնը վերականգնելու համար: Կառավարութիւնը, նորա բացակայութեան ժամանակ, յանձնւեց գահաժառանգ իշխանուհի Դոնա Իզաբել՝ին (ծնւած 1846 թ. և 1864-ին ամուսնացած Գաստօն Օրլէանեան կոմս դ'Էւօ, comte d'Eu՝ի հետ): Բայց խնամակալուհին չը կառավարեց երկիրը իւր հօր խելացի քաղաքականութեամբ և չը կարողացաւ ժողովրդի համակրութիւնը պահպանել: Նա սկսեց ցոյց տալ ծայրայեղ կղերական կաթոլիկական հակումներ: Կանանց մի ուղերձի մէջ, ներկայացրած պարլամենտին, որով խնդրում էր սենատից ընդունւած կրօնական ազատութեան օրէնքը յետ վերադարձնել, իշխանուհու անունը ստորագրութիւնների գլխին էր: Պատգամաւորների ժողովը կ'ընդունէր անպատճառ կրօնական ազատութեան օրէնքը, բայց այդ ուղերձը գործը խանգարեց:

Նոյն ժամանակում երկիրը մտան բազմաթիւ եղուիտներ և այլ կարգերի հոգեւորականներ, որոնք իրանց ձեռքը զցեցին մասաղ սե-
րունդի կրթութիւնը, ֆանատիկոսացրին տեղական հոգեւորականու-
թիւնը և հսկողութիւն ձեռք բերեցին վերջինիս վերայ: Մինչդեռ
կայսր Դոմ Պետրո ընդունել էր այն օրէնքը, որով բոլոր կաթողիկ
վանքերը և կաթողիկ հոգեւորական միաբանութիւնները զցւած էին
մեռնելու դրութեան մէջ և դրանց բոլոր անշարժ կարողու-
թիւնը պէտքէ ազգային ժառանգութիւն դառնար, թագաժառանգ
իշխանուհին, ընդհակառակը, միաբանական-հոգեւորականներին յետ
կանչեց և այս համոզմունքի մէջ ազգը ամրապնդեց, թէ ժամանակով
վանքերը նրանց կրկին պիտի վերադարձնէ: Խնամակալուհու այդ
խիստ հռովմա-կաթողիկական ուղղութիւնը, որը իւր հօրը հակա-
ռակ էր, խիստ շատ նպաստեց կայսերութեան թուլանալուն:

Այսպէս էին գործերի դրութիւնը, երբ կայսրը 1888 թ. օգոս-
տոսին վերադարձաւ Բրազիլիա: Նորա առողջական դրութիւնը մեծ
ցաւակցութիւն յարուցեց ժողովրդի մէջ, որովհետեւ նորա սրտի բա-
րութիւնը, քաղաքական շիտակութիւնը և անշահասիրութիւնը ընդ-
հանուր համակրութիւն էին ստեղծել և նորա քաղաքական հեռա-
տեսութիւնը և բնաւորութեան պարզութիւնը ընդունում էին նոյն
իսկ հանրապետականները: Վերջիններս ուղղակի ասում էին. «Քանի որ
Դոմ Պետրո կ'ապրի, յեղափոխութիւն և պետական խառնակումն չի
լինելու, բայց նա կը պայթի, երբ թագաժառանգուհու զահը բարձ-
րանալուն պէս եղուիտները պետութեան տէրեր կը դառնան»: Միա-
պետութեան բարեկամները խորհուրդ էին տալիս, որ իշխանուհի
թագաժառանգը իրաւունքից հրաժարւի յօգուտ իւր որդուն: Բայց
սա էլ միայն 13 տարեկան էր, այնպէս որ մինչ չափահասութեան
հասնելը էլի պրինցեսս Եղաբէլը պէտք է խնամակալուհի մնար: Այլ
խօսքերով, ինչպէս որ ուզենան բանը դրստել, խնդիրը մնում էր ա-
րատաւոր շրջանի մէջ, ըստ լատինական առածի:

Բայց երկիւղը հռովմա-կաթողիկական կղերական ուղղու-
թիւնից, պետական գործերը վարելու մէջ, միակ մեծ պատճա-
ռը չէր: 1808-ին Պորտուգալիայի Իոհանն թագաւորը փախաւ
Նապոլէոն առաջնից և իւր արքունիքը տեղափոխեց Բրազիլիա, որը
այն ժամանակ Պորտուգալիայի դաղթական մի երկիր էր: Երբ 1821

Թւականին նա վերադարձաւ Եւրոպա, բրազիլիացիք, որոնք այդ 13 տարիներում սովորեցին իրանց զգալ իբր մի պետութիւն, այլ ևս չ'ուզեցին ստորանալ մի դադթական երկրի աստիճանով և կառավարել հեռուից (Պորտուգալիացիք)։ Նրանք բարձրացրին անկախութեան և մայր-հայրենիքից բաժանելու ձայնը։ Բրազիլիայում յետ մնացած Թագաժառանգը անցաւ այդ շարժման գլուխը, կայսերութիւն հրատարակեց և բարձրացաւ դահը իբր Դոմ Պեդրո I։ Դրանով իսկապէս չը հաստատուեց մի միապետութիւն, այլ միայն միապետական կառավարութեան մի ձև։ Երկու կողմից էլ դա բաւարարութեան մի միջոց էր։ Բրազանցի տոհմի համար, որ ուզեց դրանով իւր ձեռքում ունենալ երկիրը, շարժման պարագլուխների համար՝ դա մի հեշտ միջոց էր անկախութեան խնդիրը լուծելու։

Արդ, երբ Դոմ Պեդրո I-ը հռչակեց կայսր Բրազիլիայի, իսկապէս մի բրազիլիական ազգ չը կար։ Միմիայն դասակարգեր կային՝ զանազան գրուպպաներ, որոնք մէկը միւսի յետևից կառավարում էին երկիրը իրանց օգտին։ Երբ մի գրուպպա նօթտասը տարի կառավարելուց յետոյ երկրի հիւթը ծծել էր և դժգոհութիւնը ընդհանուր էր, կայսրը կանչում էր կառավարելու նրանց հակառակորդներին, որոնք սակայն բոլորովին նոյն ձևով աշխատում էին մի 7—10 տարի էլ իրանց օգտին բանեցնել երկրի օրէնսդրութիւնը և կառավարութեան ոյժը, միշտ ի հարկէ պարլամենտի միջոցով, որի իրանց համար յաջող ընտրութիւնները ուղղակի սարքում էին՝ գործադրելով ամեն միջոց։

Եւ այսպէս, վերը բերած հանգամանքներից դուրս է գալիս, որ երկրի մէջ մի դասակարգը թշնամանում էր միւս դասակարգերի հետ։

Թշնամացրին ազատամիտներին՝ կաթոլիկ կղերականութեան ոյժ ապով և մոցնելով երկիրը եզուիտներին և այլ դրանց նման հոգեւորականներին։

Թշնամացրին բողոքականներին (գերմանացի), որոնք մանաւանդ հարաւային պրովինցներում նշանաւոր ազգաբնակութիւն են կազմում (կարծեմ մօտ 150.000 հոգի), խանգարելով կրօնական ազատութեան օրէնքի ընդունելուն։

Իսկ զօրքը, մի որ և իցէ 13.000 մարդ, գրեթէ արհամարհ-

ւած էր և թողած առանց խնամքի և առանց սանձի: Այդպիսի
 հանգամանքներում կայսերական տան դէմ եղած յեղափոխութիւնը
 մեզ չի զարմացնում: Մնում է միայն ցանկանալ, որ ժամա-
 նակաւոր կառավարութիւնը, որքան կարելի է, շուտով տեղ
 տայ կանոնաւոր կառավարութեան և որ վերջինս ազատ մնայ
 այն ներքին երկպառակութիւններից, որոնք այնքան սովոր-
 ական են մանաւանդ իսպանո-ամերիկական հանրապետութիւն-
 ներին:

Z.